«ՍՊԵՑԻՖԻԿՆԵՐԸ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (1918—1920 ԹԹ.)

Ա. Մ. ՀԱԿՈԲՅԱՆ

ՍԴԲՀԿ՝ կամ այսպես կոչված «սպեցիֆիկների» գործունեությունը վերլուծելիս ու գնահատելիս այն կարելի է բաժանել երկու փուլի՝ նախահանրապետական (1903—1918 թթ.) և Հայաստանի Հանրապետության (1918—1920 թթ.) ժամանակաշրջան։ Գործնականում այս երկու փուլերը որակապես իրարից տարբերվում են։ Եթե առաջին շրջանում ՍԴԲՀԿ իրենից ներկայացնում էր զուտ բանվորական, մարքսիստական, սոցիալ-դեմոկրատական դավանանքի ու բովանդակության կազմակերպություն, ապա Հայաստանի Հանրապետության ժամանակաշրջանում, հաշվի առնելով Ռուսաստանի, Անդրկովկասի ու Հայաստանի կյանքում տեղի ունեցած մի շարք նոր իրողություններ և դրանց լույսի տակ վերագնահատելով իր ծրագրի ու գործելակերպի առանձին զրույթներն ու մոտեցումները, քաղաքական որոշակի բարեշրջում (էվոլյուցիա) ապրեց։ Նա, սոցիալիստական աշխարհայացքին հավատարիմ մնալով հանդերձ, հետապնդում էր ազգային-պետական շահեր։ Արդեն 1920 թ. սկզբներին նա հայոց անկախ պետականության պաշտպանության դիրքերում էր։ Այս կապակցությամբ ՀՀԴ քաղաքական գործիչ ու տեսաբան Ռ. Դարբինյանը գրում էր. «Տարիների ընթացքում սակայն հայ սոցիալ-դեմոկրատների մեջ տեղի ունեցավ հիմնական կերպարանափոխություն։ Սրա ավելի առողջ ու շիտակ մասը հետզհետե զգաց իր սխալը և ենթարկվեց ազգայնացման, աշխատեց իր դասակարգային ըմբռնումները հաշտեցնել ազգային տեսակետի հետ ու սոցիալիստական գաղափարները դնել ազգային գաղափարի մեջ։ Հոգեբանական այդ բարեշրջման շնորհիվ էր, որ մեր օրերում հնարավոր դարձավ Հայաստանի սոց.-դեմ. բանվորական կուսակցության (ՀՍԴԲԿ) կազմակերպումը, որի ըմբռնումը ազգության մասին գրեթե ոչնչով այսօր չի տարբերվում ՀՅԴ ավանդական տեսակետից»[1]։ «Սպեցիֆիկները» հայ քաղաքական այն կազմակերպություններից էր, որ կարճ ժամանակամիջոցում դարձավ Հայոց պետականության ամենաջերմ պաշտպաններից մեկը։

ՀՀ գոյության առաջին տարում «սպեցիֆիկների» կշիռն ու ազդեցությունը հանրապետության հասարակական-քաղաքական կյանքում շատ աննշան էր։ Դա երևաց հատկապես 1919 թ. հունիսին կայացած Հայաստանի խորհրդարանական ընտրությունների ժամանակ, երբ այդ կազմակերպությունը չկարողացավ պատգամավորական որևէ տեղ գրավել[2]։ Նրանք չէին ներկայացել առանձին ցուցակով, քանի որ բանվորասակավ Հայաստանում շատ քիչ հետևորդներ ունեին և կազմակերպչորեն դեռևս չէին ձևավորվել որպես ինքնուրույն կուսակցություն։ Այս և այլ պատճառներով կազմակերպության ղեկավարները անհրաժեշտ գտան հիմնել կուսակցություն։

1920 թ. հունվարի 18-ին նրանք հանդես եկան մի կոչ-հայտարարությամբ, որում ազդարարում էին անկախ Հայաստանի հողի վրա նոր կուսակցության՝ Հայաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակ-

---

1 Հառաջ, 30. VI. 1920։

2 Ս. Վրացյան, Խարխափումներ, Բոստոն, 1924, էջ 68։

գության (ՀՍԴԲԿ) հիմնադրման մասին[3]։ Այդ նշանակում էր, որ «սպեցիֆիկները» վերաճում են քաղաքական-կազմակերպական նոր որակի՝ կուսակցության։ ՀՍԴԲԿ-ի հիմնադիր անդամներն էին՝ Դավիթ Անանունը, Պետրոս Զամբուրյանը, Բախշի Իշխանյանը, Յուսիկ Խանգուդյանը, Աշոտ Մելիք-Հովսեփյանը, Դագիկ Պիրիկյանը, Պողոս Օհանջանյանը, Խաչիկ Սամվելյանը, Տրդատ Տրդատյանը[4]։ Այս նորհիմն կուսակցությունը միանում են, այսպես կոչված, անկախ սոցիալիստները՝ հայ մենշևիկների մի մասը[5]։

Հունվարի 18-ի հայտարարությունը բովանդակային առումով փաստորեն ուներ ծրագրային նշանակություն։ Հայտագրում կրկին ընդգծվում էր նորաստեղծ կուսակցության հավատարմությունը սոցիալիզմի ուսմունքին և սոցիալ-դեմոկրատական գործելակերպին։ Բայց դրա հետ միաժամանակ վերագնահատման էին ենթարկվում նախկին կազմակերպության քաղաքական նվաղագույն ծրագրի որոշ կետեր, և առաջադրվում էր կուսակցության մոտակա քաղաքական գործունեության հնարավոր պլատֆորմը. «Ամուր ոտքերով կանգնել ազգային պետականության տեսակետի վրա, այսինքն ընդունել Հայ ժողովրդի ազգային ինքնորոշումը, որ է՝ միացյալ Հայաստանի, որպես քաղաքական ուրույն միավորի, անկախություն»[6]։ Այդ նշանակում է, որ ՀՍԴԲԿ-ը իր հիմնադրման պահից ընդունել է Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարը։ Նրա գործունեության առանցքը Հայաստանի Հանրապետությունն էր և վերջինիս առջև ծառացած քաղաքական ու սոցիալ-տնտեսական բազմաբնույթ խնդիրները։ Հայաստանի նորանկախ հանրապետությունը ՀՍԴԲԿ համար պատկերանում էր իբրև ռամկավար (ժողովրդավարական) պետություն, որ առանց ազգային ու կրոնական խտրականության պետք է ապահովվեին քաղաքացիների ազատությունն ու իրավունքները[7]։ Այս կուսակցությունը հետևողականորեն հանդես էր գալիս ազգային փոքրամասնությունների քաղաքացիական, ազգային-հոգևոր-մշակութային իրավունքների պաշտպանության օգտին։

Ագրարային հարցում ՀՍԴԲԿ-ն պահանջում էր գյուղացիության հողային կարիքների ամենալայն բավարարում, իսկ տնտեսական քաղաքականության խնդրում նրանք մի կողմից խրախուսում էին մասնավոր, ձեռնարկչական գործունեությունը, մյուս կողմից, որպես սոցիալիստներ, կառավարությունից պահանջում էին արդյունաբերական, տնտեսական ու մշակութային հանրօգուտ ձեռնարկությունների ու հաստատությունների հետզհետե պետականացում[8]։

Միջկուսակցական և կառավարության հետ փոխհարաբերություններում Հայաստանի սոցիալ-դեմոկրատները ցուցաբերում էին ավելի իրատես ու սթափ մոտեցում։ Նրանք գտնում էին, որ հայոց պետականության գերխնդրի հրամայականով բոլոր կուսակցությունները պետք է հետաձգեն սկզբունքային տարաձայնությունները և մշակեն փոխզիջումային հաշտության և համագործակցության ուղեգիծ[9]։ Հայ քաղաքական կուսակցությունների մերձեցման ու համագործակցության հիմքում պետք է դրվեր Հայոց անկախ պետականության կայացման գաղափարը։ Եվ այս դժվարին խնդրի իրականացման ճանապարհին ամենամեծ պարտականությունը և պատասխանատվությունը ընկնելու էր կառավարող ՀՀԴ կուսակցության վրա։ Հայաստանի սոցիալ-դեմոկրատները ամենևին էլ համակրանք չէին տածում

---

3 ՀՀ Հասարակական-քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի պետական կենտրոնական արխիվ (այսուհետ՝ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ), ֆ. 1022, ց. 7, գ. 68, թ. 1։

4 Նույն տեղում։

5 Վ. Ա. Ավետիսյան, Հայ հասարակական մտքի զարգացման մարքս-լենինյան փուլի սկզբնավորումը, Ե., 1976, էջ 510։

6 ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆ. 1022, ց. 7, գ. 68, թ. 1։

7 Նույն տեղում։

8 Նույն տեղում։ Տե՛ս նաև Հայաստանի կոոպերացիա, 30. XI. 1919, էջ 581—582։

9 ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆ. 1022, ց. 7, գ. 68, թ. 1։

Դաշնակցություն կուսակցության հանդեպ, տեղն եկած ժամանակ քննադատության թիրախ էին դարձնում նրան։ «Դաշնակցության խնդրում,— կարդում ենք նրա որոշումներից մեկում,—որպես կառավարող կուսակցություն, մեր վերաբերմունքն այն է, որ նա կարող է արժանանալ մեր բարոյական աջակցությանը այն ժամանակ, եթե մեր ժողովրդին ու երկրին, մեր պետությանն ու անկախությանը կսպառնա վտանգ՝ արտաքին թե ներքին ուժերի հարվածներից»[10]։

ՀՍԴԲԿ թեև քանակապես շատ փոքրաթիվ էր, սակայն նրա անդամները ՍԴԲՀԿ շարքերում, ավելի քան մեկ և կես տասնամյակի ընթացքում, անցել էին քաղաքական պայքարի դպրոց ու ձեռք էին բերել հարուստ փորձ։ Ինքնին հասկանալի է, որ իր սոցիալական կազմով զուտ բանվորական համարվող այսպիսի կուսակցությունը բուն Հայաստանում չուներ քիչ թե շատ ամուր սոցիալական հենարան, քանզի բանվոր դասակարգ, որպես այդպիսին, հանրապետությունում գրեթե չկար[11]։

Եթե ՍԴԲՀ կազմակերպությունը Անդրկովկասում հանդես էր գալիս որպես զուտ հայ բանվոր դասակարգի շահերի արտահայտիչ ու հեռանողական պաշտպան, ապա Հայաստանի բանվորասակավ հանրապետությունում կուսակցության վերաճած նախկին «սպեցիֆիկները» (իրենց սոցիալական հենարանը ընդլայնելու նպատակով) արդեն խորթ չէին համարում բանվորների կողքին նշել նաև աշխատավոր զանգվածների՝ չքավոր գյուղացիների, մանր արհեստավորների ու առևտրականների սոցիալական կարգախմբերը, հանդես գալ նրանց անունից։ Թե՛ ծրագրային-քաղաքական պահանջներում և թե՛ սոցիալ-դասակարգային բովանդակության տեսակետից «սպեցիֆիկները» չմնացին որպես դոգմատիկներ, այլ պատմաքաղաքական դեպքերի ու իրադարձությունների հրամայականով աշխատեցին ընթանալ ժամանակին համաքայլ՝ վերանայելով ու կատարելագործելով իրենց ռազմավարական և մարտավարական ցինանոցը։

Նկատի ունենալով, որ ներկա փոփոխված քաղաքական պայմաններում արդեն հնացել էին «սպեցիֆիկների» ծրագրի տեսագործնական շատ կետեր ու առաջադրություններ, ուստի անհրաժեշտություն առաջացավ վերանայել ու մշակել նոր ծրագիր։ Այդ նպատակով 1920 թ. մայիսի 28,ին (Հայաստանի անկախության երկրորդ տարեդարձի օրը) Ալեքսանդրապոլում դումարվեց կուսակցության համագումար (կոնֆերանս)[12]։ Համագումարի աշխատանքներին մասնակցում էին Երևանի, Ալեքսանդրապոլի, Ղարաքիլիսայի և մի շարք այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ։ Օրակարգում դրված էին զեկուցումներ, կուսակցության ծրագրի, գործելակերպի, կազմակերպական հարցեր և ԿԿ-ի ընտրություններ[13]։ Օրակարգային հինգ հարցերից կենտրոնականը կուսակցության ծրագիրն էր, որը վերջնականապես մշակվեց և ընդունվեց համագումարում։ Այստեղ ևս կուսակցության ծրագրի տեսական մասը հենվում էր մարքսիզմի ուսմունքի վրա այնպես, ինչպես ՍԴԲՀԿ կազմակերպության ծրագրում էր։ Նոր ծրագրում, ընդհանուր դրույթների ձևով, խոսվում էր բուրժուազիայի և պրոլետարիատի դասակարգային հակամարտության, վերջինիս կողմից սոցիալիստական հեղաշրջման անխուսափելիության և սոցիալիստական հասարակության հաստատման անհրաժեշտության մասին, որով, ըստ նրանց, ազատություն կստանար ոչ միայն պրոլետարիատը, այլև համայն մարդկությունը[14]։ Ծրագրում տեսական մի քանի դրույթ էլ ընդօրինակված էր գերմանական սոցիալ-դե-

10 Նույն տեղում, գ. 72, էջ 8։

11 Հայաստանի աշխատավոր, 16. IX. 1919։

12 ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆ. 1022, ց. 7, գ. 72, էջ 3, ՀՀ Պետական կենտրոնական պատմական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՊԿՊԱ), ֆ. 393, ց. 1, գ. 303, թ. 1։

13 Ժողովուրդ, 10. VI. 1920, Բանվորի ձայն, 20. VI. 1920։

14 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 404, ց. 1, գ. 12, թթ. 3—4։

մոկրատների՝ Էրֆուրտի ծրագրից[15]։ «Սպեցիֆիկները» իրենց ուսուցիչներն էին համարում մարքսիզմի մեծ տեսաբաններ Կ. Կաուցկուն և Գ. Պլեխանովին[16]։

Հայաստանի սոցիալ-դեմոկրատների, որպես սոցիալիստների, գործունեության գլխավոր խնդիրն էր կազմակերպել ու դաստիարակել պրոլետարիատին (այլ աշխատավոր մասսաներին) և ղեկավարել նրանց կոիվը[17], բայց այդ կոիվը մղվելու էր ոչ թե պրոլետարիատի դասակարգային տիրապետության (դիկտատուրայի) հասնելու համար, ինչպես գտնում էին բոլշևիկ-լենինյանները, այլ առհասարակ վերացնելու դասակարգային տիրապետությունը և հաստատելու արդար, ժողովրդավարական, քաղաքացիական հասարակություն՝ զերծ դասակարգային, ազգային, կրոնական, սեռային շահագործումից ու բռնությունից[18]։

Նոր ու ինքնուրույն էր ծրագրի գործնական մասը։ Առանձնահատուկ տեղ էր տրվում հայ ժողովրդի պետական ինքնորոշման փաստին։ Նրանում ընդգծվում էր, որ կուսակցությունը կանգնած է Միացյալ և Անկախ Հայաստանի պետականության տեսակետի վրա[19]։ «ՀՍԴՀԿ,—կարդում ենք ծրագրում,—նեցուկ է կանգնում Միացյալ Հայաստանի քաղաքական անկախության, պաշտպանում է նրա պետական ինքնուրույնությունը՝ իբրև ռամկավար հանրապետություն»[20]։ Ըստ ծրագրի, պետության գերակայող ուժը ժողովուրդն է, որն ընտրում է ներկայացուցչական ժողով և դրա միջոցով իրականացնում պետության կառավարումը։ Կուսակցության ծրագրի սոցիալ-տնտեսական և իրավաքաղաքական ընթացիկ պահանջները շատ նման էին ՀՀԴ-ի, Սահմանադիր ռամկավար և Հայ ժողովրդական կուսակցությունների ծրագրերի նվազագույն պահանջներին։ Այսպես՝ կուսակցություն դարձած «սպեցիֆիկները» պաշտպանում էին ռամկավարական (ընդհանուր, հավասար, ուղղակի և գաղտնի) ընտրակարգը, տեղական լայն ինքնավարության, անձի և բնակարանի անձեռնմխելիության, դեմոկրատական (խրճի, խոսքի, մամուլի, ժողովների, գործադուլի, միությունների) ազատությունների, դասերի վերացման, կրթության իրավունքի, ազգային փոքրամասնությունների համար ազգային-մշակութային ինքնավարության, անվճար ուսման ու բժշկության, եկեղեցու՝ պետությունից անջատման, իսկ դպրոցը՝ եկեղեցուց և համանման այլ պահանջներ[21]։

Հողային խնդրում «սպեցիֆիկները» արտահայտվում էին կալվածատիրական, եկեղեցական և վանքապատկան հողերի պետականացման օգտին։ Պետականացված այդ հողերը աշխատանքային նորմայով տրվելու էին բոլոր կարիքավոր քաղաքացիներին, իսկ գյուղական համայնքների հողերը մնում էին համայնքների իրավասության ներքո[22]։ Դ. Անանունը հողային խնդրում գտնում էր, որ այն Հայաստանում տակավին սուր բնույթ չունի, քանի որ տարբեր պատճառներով գոյացել են մեծաքանակ անմշակ հողեր[23]։

Հայաստանի սոցիալ-դեմոկրատները, իրենց համարելով բանվորական կուսակցություն, գործնականում ոչ մի առավելություն կամ արտոնություն չէին նախատեսում այդ դասակարգին։ Նրանք բանվորների համար պահանջում էին ութժամյա աշխատանքային օր, շաբաթական հանգիստ, կանանց ու երեխաների գիշերային աշխատանքի արգելում[24], մի խոսքով, այնպիսի

15 ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆ. 1022, ց. 7, գ. 72, էջ 4։

16 Բ. Ինչիանյան, Հայ հեղափոխական շարժումը Անդրկովկասում, Բաքու, 1918։

17 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 404, ց. 1, գ. 12, թ. 5։

18 Նույն տեղում։

19 ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆ. 1022, ց. 7, գ. 72, էջ 5։

20 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 404, ց. 1, գ. 12, թ. 5։

21 Նույն տեղում, թ. 6—7։

22 Նույն տեղում, թ. 7։

23 Նոր սերունդ, 17. III. 1920։

24 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 404, ց. 1, գ. 12, թ. 7։

պահանջներ, որ առկա էին այդ շրջանում իրեն ժողովրդավարական համարող ցանկացած կուսակցության ծրագրում։

ՀՍԴԲԿ 1920 թ. մայիսյան համաժողովում հաստատվել է նաև Կանոնագրությունը։ Կազմակերպական առումով ՀՍԴԲԿ անկախ կուսակցություն էր (կախում չուներ որևէ ուրիշ կուսակցությունից) և համարվում էր հայ պրոլետարիատի ներկայացուցիչը։ Կուսակցության կազմակերպական ստորին օղակը խումբն էր։ Խմբերի միավորումով հիմնվում էին գյուղական և քաղաքային ենթակոմիտեներ ու կոմիտեներ։ Կուսակցության բարձրագույն մարմինը համագումարն էր, որը հրավիրվում էր կուսակցության ԿԿ-ի նախաձեռնությամբ՝ տարին մեկ անգամ։ Համագումարների միջև ընկած ժամանակամիջոցում կուսակցության բարձրագույն գործադիր ղեկավարությունը իրականացնում էր Կենտրոնական Կոմիտեն։ Կենտկոմը ընտրվում էր համագումարի կողմից, մեկ տարով։ Կենտկոմի որոշումները պարտադիր էին կուսակցության բոլոր մարմինների համար։ Կուսակցությունն ուներ իր կենտրոնական օրգանը[25]։

Կուսակցության մայիսյան համագումարը ընտրեց հինգ հոգուց բաղկացած Կենտրոնական Կոմիտե։ ՀՍԴԲԿ ԿԿ-ի նախագահ փոխնախագահ ընտրվեցին ԿԿ-ի անդամներ Բ. Իշխանյանը, Տր. Տրդատյանը և ուրիշներ[26]։

ՀՍԴԲԿ քիչ թե շատ աչքի ընկնող կազմակերպություններից էին Երևանի, Ալեքսանդրապոլի և Ղարաքիլիսայի կոմիտեները։ Կուսակցությունը զգայուն կերպով արձագանքում էր ՀՀ-ում և նրա շուրջը կատարվող իրադարձություններին։ Նրա գործունեության հիմնական ձևերն էին կոչերը, թռուցիկները, հրապարակային ելույթները, զանազան տպագիր հրապարակումները և այլն։

Ցավոք, ՀՍԴԲԿ հիմնումը և շուրջ մեկամյա գործունեությունը համընկավ Հայաստանի Հանրապետությանն սպառնացող վտանգների, նրա վայրէջքի ու անկման հետ։ Ինչպես հայտնի է, ՀՀ քաղաքական ճգնաժամը սկսվեց բոլշևիկների կազմակերպած մայիսյան հայտնի ապստամբությամբ։ Այս ամենը սկսվեց Ադրբեջանի «թավշյա հեղափոխությունից», երբ քեմալականների համաձայնությամբ, առանց որևէ կրակոցի, 11-րդ Կարմիր բանակը մուտք գործեց Բաքու, և Ադրբեջանը խորհրդայնացվեց։ Հաջորդ քայլը պետք է լիներ Հայաստանի խորհրդայնացումը։ Միանգամայն տեղին ու դիպուկ էր նկատում ՀՍԴԲԿ-ի Երևանի կոմիտեն, երբ 1920 թ. ապրիլի 28-ի Բաքվի դեպքերը որակում էր. «ոչ այլ ուրիշ բան, եթե ոչ ծրագրված քաղաքական խաղ»[27]։

Մայիսյան ապստամբության ծանր օրերին Հայաստանի սոցիալ-դեմոկրատները միանշանակ դատապարտեցին հայ բոլշևիկների հակասեփական վարքագիծը և հաստատակամորեն կանգնեցին ՀՀ անկախ պետականության պաշտպանության դիրքերում։ Ալեքսանդրապոլի զինված ելույթի կապակցությամբ ՀՍԴԲԿ Երևանի կոմիտեն մայիսի 14-ին հրապարակեց կոչ՝ ուղղված բանվորներին, գյուղացիներին և քաղաքացիներին։ Ահավասիկ մի հատված այդ կոչից. «Բաքվի քաղաքական կոմեդիան վերածվեց Ալեքսանդրապոլի ողբերգության։ Մի խումբ ստորահոգի բախտախնդիրներ հանդգնեցին բարձրացնել քաղաքացիական կռվի արյունաշաղախ դրոշը, ապստամբել հայ ժողովրդի ինքնորոշված կամքի դեմ։ Զրահապատ գնացքի մեջ պատսպարված այդ մի խումբ անտրակելի ոճրագործ-դավաճանները իրենց խելագար արարքով օգնում են միայն արտաքին թշնամիներին՝ թե՛ Հայաստանը օղակող թուրք-թաթարական սպառազեն բանդաներին և թե՛ Պոլսի քաղաքագետներին»[28]։ Փաստաթղթում կոչ էր արվում աջակցել Հա-

25 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 404, ց. 1, գ. 12, թթ. 9—11։
26 ՀՀ ՀՔԿԹ ՊԿԱ, ֆ. 1022, ց. 7, գ. 72, թ. 14։
27 ՀՀ ՀՔԿԹ ՊԿԱ, ֆ. 1022, ց. 7, գ. 69, թ. 1։
28 Նույն տեղում, գ. 70, թ. 3։

յաստանի կառավարությանը և խեղդել «հայրենադավ բոլշևիկ ոճրագործների խռովությունը»[29]։

ՀՍԴԲԿ ջերմորեն ողջունեց Հայաստանի անկախության երկրորդ տարեդարձը։ Այդ նշանավոր տոնի առթիվ Երևանի կոմիտեն տպագրեց Հայաստանի քաղաքացիներին ուղղված կոչ, որում ասվում էր. «Կլխավորը աղատություն ձեռք բերելը չէ, այլ ձեռք բերած ազատությունը պահպանելը»[30]։ Կոչի հեղինակները ժողովրդին զգուշացնում էին խուսափել «գառնազգեստ գայլերի խարուսիկ շոյանքներից և սիրաշահումներից»[31]։

Արդեն 1920 թ. մայիսին ՀՍԴԲԿ-ին հայտնի էր բոլշևիկ-քեմալական համագործակցության, Մոսկվայի և Էրզրումի քաղաքագետների ծրագրերի մասին, որոնց «հարազատորեն ծառայում էին հոգեվաճառ հայ բոլշևիկները»[32]։

1920 թ. հուլիսին ՀՍԴԲԿ ԿԿ-ը հատուկ կոչ է հղում աշխարհի բոլոր սոցիալիստական կուսակցություններին, Սոցիալիստական ինտերնացիոնալի Բյուրոյին՝ Խորհրդային Ռուսաստանի, Թուրքիայի և Ադրբեջանի գործակցության հետևանքով Հայաստանի անկախ պետականությանը սպառնացող մահացու վտանգի մասին։ «Խորհրդային Ռուսաստանը,—ասված է կոչում,—դաշնակցած Ադրբեջանի թաթարների և թուրքական Անատոլիայում գործող ազգայնականների կամ Մուստաֆա Քեմալ փաշայի հետ, բոլոր կողմերից շրջապատել են Հայաստանը թշնամական ուժերով և սպառնում են ոչնչացնել հայ ժողովրդի այնքան թանկ գնով ձեռք բերված աղատությունը և անկախությունը։ Խորհրդային կառավարությունը սպառնում է իր համար ճանապարհ հարթել դեպի Արևելք՝ հայ դեմոկրատիայի դիակների վրայով»[33]։ Այս փաստաթուղթը կարևոր էր նրանով, որ թուրք-բոլշևիկյան գործարքի փաստը ժխտող կամ առնվազն կասկածի տակ առնող հեղինակները հայտարարում էին, թե դա եղել է ընդամենը ՀՀԴ կուսակցության և Հայաստանի դաշնակցական կառավարության մտացածին հնարքը՝ իր տխրահռչակ տիրապետությունը երկարացնելու համար։ Մինչդեռ, ինչպես տեսնում ենք, թուրք-բոլշևիկյան համագործակցության մասին փաստում է ՀՀԴ-ին և Հայաստանի կառավարությանը ամենևին էլ ոչ համակիր ՀՍԴԲ կուսակցությունը։ Վերոգրյալը հաստատելու համար ավելացնենք, որ խորհրդա-թուրքական համագործակցության մասին են վկայում այլ ընդդիմադիր կուսակցություններ, այդ թվում նաև՝ Ս. Դ. Հնչակյանները[34]։ Ս. Դ. Հնչակի պատմագիր Ա. Կիտուրը հայտնում է, որ 1920 թ. գարնանը արդեն ձևավորվել էր բոլշևիկ-քեմալականների գործակցությունը[35]։ Թուրք-բոլշևիկյան գործակցությունն այնքան ակնհայտ փաստ էր, որ դրան տեղյակ էին հասարակայնության լայն շրջանակներ, նույնիսկ Հայաստանի սահմաններից դուրս։ 1920 թ. ամռանը Թիֆլիսում հայերի կազմակերպած միտինգներից մեկում խորը ցասում ու վրդովմունք էր ուղղված «թուրք-թաթար-բոլշևիկյան ռեակցիոն արշավին»[36]։

1920 թ. աշնանը թուրք-հայկական ճակատագրական պատերազմի ժամանակ ՀՍԴԲԿ, մյուս հայ քաղաքական կուսակցությունների հետ միասին, հանդես եկավ հայրենիքի պաշտպանության և ոսոխին արժանի հակահարված տալու վճռականությամբ։ Նա իր պատրաստակամությունը հայտնեց

---

29 Նույն տեղում։

30 Նույն տեղում, թ. 1։

31 ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆ. 1022, ց. 7, գ. 70, թ. 1։

32 Նույն տեղում, թ. 3։

33 Նույն տեղում, գ. 73, թ. 1։

34 Երիտասարդ Հայաստան, 22. X. 1920։

35 Ա. Կիտուր, Պատմություն Ս.Դ. Հնչակյան կուսակցության (1887—1962), հ. Ա, Բեյրութ, 1962, էջ 485։

36 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 184, թ. 55։

աջակցել կառավարությանը և ըստ կարելվույն օգնել ռազմաճակատում մարտնչող մեր զորամասերին։ ՀՍԴԲԿ ԿԿ հրապարակեց առանձին կոչ՝ ուղղված հայ ժողովրդին՝ անարգ թշնամուն հակահարված տալու և հայրենիքը պաշտպանելու վերաբերյալ[37]։ Հոկտեմբերի 26-ին Երևանում կայացած միջկուսակցական միտինգում կրակոտ ճառով հանդես եկավ Բ. Իշխանյանը՝ ընդգծելով երկրին սպառնացող վտանգն ու հայրենիքը պաշտպանելու անհրաժեշտությունը[38]։

Այն բանից հետո, երբ արդեն պարտվել էր Հայաստանը և իր անկախ գոյությանը հաշվված օրեր էին մնացել, նոյեմբերի 23-ին, Հ. Օհանջանյանի գլխավորած Բյուրո-կառավարությանը փոխարինած Ս. Վրացյանի ձախ կոալիցիոն կառավարության մեջ մտնելու առաջարկ արվեց (բացի էսէռներից) ՀՍԴԲԿ գործիչներ Դ. Անանունին և Բ. Իշխանյանին։ Սակայն նրանք հրաժարվեցին[39]։

«Սպեցիֆիկ» գործիչներից ՀՀ-ում առավել ակտիվ գործունեություն են ծավալել Դ. Անանունը և Բ. Իշխանյանը, որոնք, լինելով ընդդիմադիր կուսակցության ներկայացուցիչներ, միաժամանակ պաշտոնավարել են հանրապետությունում։ Մնունդով արցախցի այս երկու գործիչները եղել են խոսքի և գրչի վարպետներ և թողել են հարուստ գիտական, քաղաքական ու գրական ժառանգություն։ Բ. Իշխանյանը գրել է նաև գերմաներեն լեզվով աշխատություններ, բնագրից հայերեն թարգմանել Կ. Մարքսի «Վարձու աշխատանք և կապիտալ» երկը և այլն[40]։

Դավիթ Տեր-Դանիելյանը (Անանունը) 1919 թ. կեսերից «Հայաստանի կոոպերացիա» երկշաբաթաթերթի խմբագիրն էր Երևանում։ Իր բազմաժանր հոդվածներում, աշխատություններում և հրապարակային դասախոսություններում նա ամեն կերպ սատարում էր Հայաստանի անկախության ամրապնդմանը։ Դ. Անանունը, անկեղծորեն պաշտպանելով Հայոց անկախ պետականության գաղափարը, առանձնապես սուր քննադատության էր ենթարկում հայ հայրենախույս բուրժուազիային, որը «փոխանակ իր կապիտալը ի սպաս գնելու սեփական ժողովրդի անկախության հիմքերն հաստատուն դարձնելու համար, բլոկադի է ենթարկել հայ հայրենիքը և դավեր է լարում նրա դեմ»[41]։ Դ. Անանունը ռուսահայերի հասարակական զարգացմանը նվիրված եռահատոր աշխատության մեջ «սպեցիֆիկյան» դիրքերից տալիս է XIX դ. և XX դ. սկզբների ռուսահայ հասարակական-քաղաքական մտքի և սոցիալ-տնտեսական հարաբերությունների զարգացման պատմությունը[42]։ Այնտեղ կան, մեր կարծիքով, վիճելի ու անընդունելի դրույթներ ու դատողություններ, բայց և կան ճշմարիտ և ուսանելի մտքեր ու հետևություններ, որոնք ներդրում են (նոր խոսք են) հայ հասարակական-քաղաքական մտքի պատմության լուսաբանման ճանապարհին։

ՀՀ-ում ավելի պատասխանատու պաշտոն էր վարում Բախշի Իշխանյանը։ 1919 թ. հուլիսից նա գլխավորում էր հանրապետության Գյուղատնտեսության և պետական գույքի գլխավոր վարչության երկրագործության բաժանմունքին կից Կենտրոնական վիճակագրական բյուրոյի աշխատանքները[43]։ Արդեն 1920 թ. վիճակագրական այդ գիտահետազոտական հիմնարկը կոչվում էր Պետական ընդհանուր վիճակագրության գլխավոր բաժանմունք։

---

37 Հառաջ, 3. X. 1920։

38 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, ց. 1, գ. 74, թ. 2։

39 Ս. Վ ր ա ց յ ա ն, Հայաստանի Հանրապետություն, Բեյրութ, 1958, էջ 491։

40 Խ. Հ. Բ ա ր ս ե ղ յ ա ն, Մարքսիզմի տարածումը Հայաստանում (1905—1920), հ. 2, Ե., 1975, էջ 258։

41 Նոր սերունդ, 17. III. 1920։

42 Դ. Ա ն ա ն ո ւ ն, Ռուսահայերի հասարակական զարգացումը, հ. 1, Բաքու, 1916, հ. 2, էջմիածին, 1922, հ. 3, Վենետիկ, 1926։

43 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 203, ց. 1, գ. 311, թ. 1, 4, ֆ. 200, ց. 1, գ. 427, թ. 107։

Բ. Իշխանյանը, փաստորեն, հանրապետության գլխավոր վիճակագիրն էր։ Այդ ընթացքում նրա ղեկավարած բաժանմունքը գիտահետազոտական ու գործնական զգալի աշխատանք կատարեց, և արդյունքում հրատարակվեցին մի շարք վիճակագրական ուսումնասիրություններ ու տեղեկատու ժողովածուներ՝ բյուլետեններ ու տեղեկագրեր[44]։

Հայաստանի քաղաքական կողմնորոշման հարցում «սպեցիֆիկները» ցուցաբերել են փոփոխական դիրքորոշում։ Եթե սկզբում նրանք հակված էին դեպի Արևմուտք, ապա 1920 թ. վերջերից հանգամանքների բնականոն թելադրանքով՝ դեպի Խորհրդային Ռուսաստան։ 1919 թ. ամռանը, երբ Փարիզի խաղաղության կոնֆերանսի հանձնարարականով Անդրկովկաս ժամանեց տարածաշրջանի գերագույն կոմիսար, ամերիկացի գնդապետ Վ. Հասկելը, այդ առթիվ Դ. Անանունը դրեց «Ամերիկայի բաղուկը» խորագրով հոդվածը։ Այնտեղ լիովին պաշտպանվում էր Հայաստանի արևմտյան կողմնորոշումը[45]։ Բ. Իշխանյանը ԱՄՆ-ի հովանավորությունը գերադասելի էր համարում հայ ժողովրդի համար և դա հիմնավորում էր ԱՄՆ-ի տնտեսական հզորությամբ ու քաղաքական բարձր կշռով։ Նա միաժամանակ գտնում էր, որ եթե ԱՄՆ-ը հրաժարվի Հայաստանի մանդատից, ապա ավելի նախընտրելի կլինի Անգլիայի և Ֆրանսիայի հովանավորությունը։ Իսկ եթե դրանք էլ հրաժարվեն, ապա նոր՝ Ռուսաստանը[46]։

Պետք է ասել, որ 1919 թ. Խորհրդային Ռուսաստանի հարցում հայ քաղաքական շրջանակները, այդ թվում «սպեցիֆիկները», հիմնականում ձեռնպահ էին մնում։ Դրա պատճառն այն էր, որ քաղաքացիական պատերազմի ճահճում խրված Ռուսաստանի քաղաքական ճակատագիրը անորոշ էր։ Միաժամանակ անընդունելի էր նրա բոլշևիկյան համակարգը։ Եվ վերջապես, ռազմաքաղաքական ծանր վիճակի պատճառով անհնար ու անհուսալի էր նրանից տնտեսական որևէ օգնություն ակնկալելը։

Մերժելով Խորհրդային իշխանության ամբողջատիրական համակարգը՝ «սպեցիֆիկները», հայ ժողովրդի և Հայոց անկախ պետականության շահերի պաշտպանության տեսակետից, չէին բացառում մերձեցումը, քաղաքական ու տնտեսական հարաբերությունների ամրապնդումը Խորհրդային Ռուսաստանի հետ։ «Եթե մեր վերաբերմունքը ժխտական է դեպի խորհրդային իշխանությունը՝ որպես վարչաձևի,—ասված է ՀՍԴԲԿ-ի կարևոր տակտիկական բանաձևերից մեկում,—դա դեռ չի նշանակում, որ մեր պետությունը պիտի թշնամաբար կամ բացասորեն վերաբերվի դեպի Խորհրդային Ռուսաստանը՝ իբրև արտաքին ուժի։ Հայ ժողովուրդը, տնօրինելով իր քաղաքական բախտը ինքնուրույնաբար, պատրաստ է քաղաքական համաձայնությամբ և առևտրա-տնտեսական պայմանագրերով բարեկամական հարաբերություններ պահպանել նախկին Ռուսաստանի նոր իշխանության հետ, ով ուզում է, թող լենի վերջինս»[47]։ Այս ամենի հետ միասին ՀՀ կառավարությունից պահանջվում էր. «Օժտված լինել սեփական արժանապատվության գիտակցությամբ, պետության բոլոր սուվերեն իրավունքները գնահատել և տաշտպանել այն փոխհարաբերությունների ընթացքում, որ նա պիտի ունենա Խորհրդային Ռուսաստանի հետ»[48]։

Ինչ վերաբերում էր ՀՀ անմիջական հարևան պետությունների հետ հարաբերությունների խնդրին, ապա միանգամայն անհրաժեշտ ու օգտակար

---

44 Բ. Իշխանյան, Հայաստանի ապրանքափոխանակությունը 1919—1920 թթ., Ե., 1920, նույնի՝ Վիճակագրական ուսումնասիրություն Անդրկովկասյան ժողովուրդների, հ. 1, Բաքու, 1919։

45 Հայաստանի կոոպերացիա, 31. VIII. 1919, Դ. Լաղյան, Հայաստան և Հայ Դատը, Ե., 1991, էջ 273։

48 Ժողովուրդ, 15. XI. 1919։

47 ՀՀ ՀՔԿՓ, ՊԿԱ, ֆ. 1022, ց. 7, դ. 72, թ. 11։

48 Նույն տեղում։

էր բարի դրացիական հարաբերությունների հաստատումը, գրեթե բոլոր հարեանների ու առաջին հերթին Վրաստանի ու Իրանի հետ[49]։ Արցախի խնդրում «սպեցիֆիկները», Դ. Անանունի գլխավորությամբ, հանդես էին գալիս այն Հայաստանին անվերապահորեն միացնելու օգտին[50], ի տարբերություն հայ բոլշևիկների, էսէռների ու մենշևիկների, որոնք շատ հաճախ սնտեսական, քաղաքական, աշխարհագրական փաստարկներով բացասաբար էին արտահայտվում Արցախը Հայաստանին միավորելու հարցում, ՀՍԴԲԿ դրսևորեց ազգաշահ դիրքորոշում։

Եթե մարքսիզմի տեսական հարցերում «սպեցիֆիկները» ցուցաբերել են հետևողականություն, ապա գործնական ու մարտավարական խնդիրներում վարել են անկայուն, փոփոխական քաղաքական գիծ։ Այդ բանը բացորոշ երևաց Հայաստանի խորհրդայնացումից հետո, նոր փոփոխված քաղաքական իրադրության մեջ։ Մինչ այդ, բոլշևիզմի և խորհրդային իշխանության անհաշտ հակառակորդ համարվող «սպեցիֆիկները» արդեն 1920 թ. դեկտեմբերին, մասամբ բոլշևիկների վախից ու սպառնալիքից, մասամբ իրենց էությանը բնորոշ անսկզբունքայնությունից և, գուցե, հայրենիքը փրկելու ցանկությունից, պատրաստակամություն հայտնեցին աջակցել ու համագործակցել Հայաստանի խորհրդային իշխանության հետ։ Հայհեղկոմին ուղղված հայտարարության մեջ ասված է. «Մեր վերաբերմունքը դեպի Հայաստանի խորհրդային իշխանությունը ոչ միայն բացասական չէ, այլև աջակցության և գործակցության պատրաստակամություն ենք արտահայտում ընդհանուրիս հայրենիքի պաշտպանության և բարգավաճման գործում»[51]։ Սակայն նման հավաստիացումներն ու խոստումները ամենևին էլ չփրկեցին ՀՍԴԲԿ-ին ոչ մի բանի առջև կանգ չառնող բոլշևիկների հաշվեհարդարից։ 1920 թ. դեկտեմբերի 2-ին Երևանի համաձայնագրով Հայհեղկոմի իշխանության գլուխ անցնելուց մի քանի օր անց անտեսվեցին այդ համաձայնագրի գրեթե բոլոր կետերը, և Արտակարգ հանձնաժողովի (Չեկայի) կողմից սկսվեցին ձերբակալությունները։ «Սպեցիֆիկները» ևս հայ քաղաքական մյուս կուսակցությունների (ՀՀԴ, ՀԺԿ, Հայ ռամկավար և այլն) նման արժանացան նույնաբնույթ խուզարկումների, ձերբակալությունների, հետապնդումների ու հալածանքների։ Ձերբակալվածների թվում էր նաև ՀՍԴԲԿ ղեկավար գործիչ, բոլշևիկների անհաշտ հակառակորդ Բախշի Իշխանյանը[52]։ Նա ձերբակալվեց Հայաստանի խորհրդայնացման առաջին օրը՝ դեկտեմբերի 2-ին։ Իր վկայությամբ՝ բանտարկության հրամանը տրվել էր հայտնի բոլշևիկ, պետական գործիչ ու ականավոր պատմաբան Աշոտ Հովհաննիսյանի թելադրանքով[53]։ Վերջինս այդ ժամանակ զբաղեցնում էր Բ. Լեգրանի դիվանագիտական միսիայի սեղեկատու բաժնի վարիչի պաշտոնը։ Բ. Իշխանյանը երկու ամիս հայտնվեց խորհրդային բանտում, որի մասին թողել էր սահմռկեցուցիչ դեպքերով հարուստ հիշողություններ[54]։

Բայց, որպես ձախակողմյան կուսակցություն, ՀՍԴԲԿ անդամների մի զգալի մասը շատերի նման անցնում է բոլշևիկյան կուսակցության շարքերը, իսկ ոմանք էլ ծպտվում են։ Հայաստանի խորհրդայնացումից հետո նախկին «սպեցիֆիկ» գործիչներից մեծարվեց միայն (բայց ոչ տևականորեն) հայտնի տեսաբան Ալ. Ռուբենին։ Անգամ Երևանում դրվեց նրա արձանը[55]։ 1912 թվականից Ալ. Ռուբենին հարեց բոլշևիկներին, իսկ 1920 թ. մարտի

---

49 Նույն տեղում, էջ 11—13։

50 Ժողովուրդ, 29. X. 1920։

51 ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆ. 1022, ց. 7, դ. 75, թ. 1։

52 Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, էջ 511։

53 Բ. Իշխանյան, Երկու ամիս բոլշևիկյան բանտում, Կահիրե, 1924, էջ 9 և 24։

54 Նույն տեղում, էջ 147—172։

55 Ս. Կասյան, Սպեցիֆիկները և սպեցիֆիզմը, Թիֆլիս, 1928, էջ 44—45 և 109։

23-ին զոհվեց Թուրք-մուսավաթականների կազմակերպած՝ Շուշիի հայտնի շարդերի ժամանակ[56]։ Իրազեկենք, որ ստույգ չէ պատմարան Հ. Վարդանյանի հայտնած տեղեկությունն այն մասին, թե Ռուբենին Բաքվում է զոհվել[57]։

Կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցության և նախկին «սպեցիֆիկների» միջև հաշտեցում չէր կարող լինել։ Այդ պայքարը սաստկացավ երկրում սոցիալիզմի կառուցմանը զուգընթաց և իր բարձրակետին հասավ 30-ական թվականների կեսերին։ Փաստենք, որ Ս. Կասյանի, Ա. Մռավյանի և մյուսների հակասպեցիֆիկյան սուր խաչաստությունները գաղափարաքաղաքական զգալի հող նախապատրաստեցին նախկին «սպեցիֆիկների» բռնադատության ու հաշվեհարդարի համար։

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության (1918—1920 թթ.) փուլում «սպեցիֆիկների» կազմակերպությունը վերաճեց կուսակցության, ապրեց գաղափարաքաղաքական բարեշրջում (էվոլյուցիա) և հայ ազգային կուսակցություններին գրեթե համահավասար, քայլ առ քայլ կանգնեց Հայաստանի անկախության գաղափարի և ազգային-պետական շահերի պաշտպանության դիրքերում։ Սակայն Հայաստանի խորհրդայնացումից հետո ՀՍԴԲԿ-ն, մյուս քաղաքական կուսակցությունների պես, ենթարկվեց լուծարման ու բռնադատության։

«СПЕЦИФИКИ» В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ (1918—1920 гг.)

А. М. АКОПЯН

Резюме

В 1918—1920 гг. организация «спецификов» переросла в Армянскую социал-демократическую рабочую партию (АСДРП). Она подверглась идеологической и политической эволюции и наравне с армянскими националистическими партиями защищала идеи национальной государственности и независимости Армении.

После советизации Армении АСДРП. подобно другим политическим партиям, подверглась репрессиям и ликвидации.

---

56 Ա. Գ. Հովհաննիսյան, Երկու բնութագիր (Սա. Շահումյան և Ալ. Ռուբենի), Ե., 1927, էջ 25, Հայաստանի կոոպերացիա, 31. VII. 1920, էջ 570։

57 Հ. Գ. Վարդանյան, Հայ բուրժուա-ազգայնական կուսակցությունների դիրքավորումը ռուսական առաջին հեղափոխության տարիներին (1905—1907 թթ.), Ե., 1975, էջ 187։